ԱԲԽԱԶԻԱՅԻ ԱՎ. Ս. Խ. Հ. ԼՈՒՍԺՂԿՈՄԱՏ

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

# ՑՈՒՑՄՈՒՆՔՆԵՐ

ԹԵ ԻՆՉՊԵՍ ՊԻՏԻ ԴԱՍԱՎՈՐԵԼ ՀԻՆԳԱՄՅԱ ԴԱՍԸՆԹԱՑՔՈՎ ԴՊՐՈՑԻ ԾՐԱԳԻՐԸ 4-ԱՄՅԱ ԴԱՍԸՆԹԱՑՔՈՎ

ԴՊՐՈՑՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ԱԲՊԵՏՀՐԱՏ

ՍՈՒԽՈՒՄ 1934 Թ.

372
8 - 99

372
У-99

# УКАЗАНИЯ

как распределить программу школ с 5 годами обучения, для школ с 4-мя годами обучения.

Отвред. С. Хачатурян Техред. Пищик

Сдано в печ. 20/XII 33 г. подписано к печати 27/I 34 г. Об'ем 1 печ. лист, формат 64×84, емкость листа 24,960 знаков.

Сухум Гостипогр. Абгиза. Заказ № 993. Тираж 900. Абгл. № 22-а

Ua 770

MAR 2010

БИБЛИОТЕКА ИНСТИТУТА ВОСТОКОВЕДЕНИЯ Академии Наук СССР

600 II-66

# ՑՈՒՑՄՈՒՆՔՆԵՐ

*Թե ինչպես պիտի դասավորել*
*Հնգամյա դասընթացքով դպրոցի ծրագիրը*
*4-ամյա դասընթացքով դպրոցների համար*

## ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒ

4-ամյա դասընթացքով դպրոցի 1-ին դասարանում պիտի անցնել ամբողջովին այբբենական դասարանի և մասամբ 1-ին դասարանի ծրագիրը, ըստ որում 1-ին դասարանի ծրագրից անցնում են 2-րդ դասարանը հետևյալ կետերը.

1) Բանավոր լեզվից—7 և 8 կետերը. 2) Ընթերցումից— ընթերցման ձևերով. 3) գրավորից— 8, 9, 10 և 11 կետերը. 4) քերականությունից—նախադասությունների տեսակները, առարկաների անունները, նրանց գործողությունը և դրությունը ցույց տվող բառեր. նախդիրներ և վերջադիրներ. ածանցներ.

5) Աշխատանք բառարանի վրա—ամբողջովին:

Յ ե ր կ ր ո ր դ  դ ա ս ա ր ա ն ո ւ մ անցնելու յեն 1-ին դասարանից 2-րդ անցկացրած վերև հիշած կետերը և մասամբ 2-րդ դասարանի ծրագիրը. ըստ որում 2-րդ դասարանի ծրագրից անցնում են 3-րդ դասարանը հետևյալ կետերը:—

1) Բանավոր լեզվից —հասարակական և արտադրական աշխատանքների պլան կազմելը կոլլեկտիվ ուժով. Թացած

50563
26 AUG 2013



կետերը մնում են 2-րդ դասարանում մի քիչ համառոտացրած՝ համաձայն աշակերտների գիտական մակարդակի։

2) Գրավորից— 15, 16 և 17 կետերը։

3) Քերականությունից — 5 տեսակի հոլովումները ամբողջովին անցնում է 3-րդ դասարանը. „ու“ և „ի“ հնչյունների սղումն վերջին փակ վանկում։ բայերի խոնարհումը ըստ ժամանակների. Նախադասության գլխավոր անդամները. անկանոն ցրված բառերից կանոնավոր նախադասություն կազմելը։

Յ ե ր ր ո ր դ դ ա ս ա ր ա ն ու մ վերը հիշած կետերը և ծրագրում հիշատակված 3-րդ դասարանի ծրագիրը ամբողջությամբ։

Չ ո ր ր ո ր դ դ ա ս ա ր ա ն—ծրագրում հիշատակված 4-րդ դասարանի ծրագիրը ամբողջությամբ։

## ՄԱՏԵՄԱՏԻԿԱ

Ա ռ ա ջ ի ն դ ա ս ա ր ա ն.

Առաջին տասնյակը. 20-ի կոնցենտրը։ Մասերը՝ $^1/_2$ և $^1/_4$։ 100-ի կոնցենտրը ավարտվումե գումարումով և հանումով՝ 100-ի շրջանում — ամենապարզ դեպքեր։

Յերկարության չափերը — մետր, սանտիմետր, դեցիմետր։

Հեղուկ մարմինների ծանրության չափերը՝ լիտր, կես, քառորդ լիտր։

Ժամանակի չափերը — ժամ, որ, ամիս, ծանոթություն ժամացույցի մասին։

Յերկրաչափական նյութ — տես այբբենական խմբի. ծրագիրը, որի վրա ավելանում է.- ուղիղ և կոր գծեր- նրանց ճանաչելու և գտնելու հմտություն շրջապատի միջավայրում։ Գետնի վրա գիծ անցկացնելը պարանի և ձողիկների ոգնությամբ։

Յ ե ր կ ր ո ր դ դ ա ս ա ր ա ն։ Թվաբանությունից ընդունվում է հնգամյա դասընթացքով դպրոցի 1-ին դասարանի ծրագիրը ամբողջովին։

Ժամանակի չափերը. — տարի, ամիս, վեցորյակ, յոթորյակ, որ, ժամ, րոպե։ Ժամանակի վորոշելը, ժամացույցով մինչև մեկ րոպեյի ճշտությամբ։ Ժամանակի կրկնակի հաշվհամարը (ժամի 2-ը հավասարե ժամի 14-ին)։



Ծանրության չափերը — գրամ, կիլոգրամ, տոնն, կշռաքարերով կշռելը։

Յերկարության չափերը — կիլոմետր, չափելը։ Առաջին դասարանի յերկրաչափական նյութին ավելանումե բակի, բանջարանոցի, հրապարակի յերկարության և լայնության չափումը։

Վորոշ յերկարության ուղիղ գծերի գծագրումը թղթի վրա։ Ծանոթություն մասշտաբի մասին։ Դասարանի սխեմատիկ գծագրումը վանդակավոր թղթի վրա։

Ամենապարզ սյունաձև դիագրամներ։

Շրջանի, քառակուսու և ուղղանկյան բաժանելը մասերի։

Տեղում չափել ուղիղ գծերը և անցկացնել նրանց պլանի վրա ըստ մասշտաբի։ Վանդակավոր թղթի վրա գծել այգու, բանջարանոցի, բակի, հրապարակի ուղղանկյուն ուրվագծերը (յեզրագծերը) խաղերի համար (ըստ մասշտաբի)։

Յ ե ր ր ո ր դ դ ա ս ա ր ա ն

Թվաբանությունից պիտի ամբողջովին անցնել 5-ամյա դպրոցի 2-րդ դասարանի ծրագրի նյութը, ավելացնելով.— Բազմանիշ թվերի բազմապատկումը յեռանիշ և մեջ տեղը զերո ունեցող թվերով։ Բազմանիշ թվերի բաժանումը յեռանիշ թվերի վրա։

Գործողությունների կարգը։ Փակագծերի գործածությունը։ Հասարակ կոտորակների բազմապատկման վրա ավելանում է.—մասերի վերածումը, միանուն և բազմապատիկ մասերի գումարումը և հանումը։

Ամբողջի մեկ և մի քանի մասերի գտնելը (2 գործողությամբ)։

Յերկրաչափական նյութ — անցյալ տարիների գիտելիքների սիստեմի վերածելը և չափերի մասին ունեցած գիտելիքների ընդլայնումը. — յերկարության չափերը՝ կիլո-

ՊԵՏ. ԱՆՆ. ԳՐԱԴԱՐԱՆ
ГОС. БИБЛИОТЕКА

մետր, մետր, դեցիմետր, սանտիմետր, միլիմետր․ ծանրության չափեր՝ տոնն, ցենտներ, կիլոգրամ, գրամ. Ժամանակի չափերը՝ հարյուրամյակ, տարի, ամիս, որ, ժամ, րոպե, վայրկյան։

Նրանց վերածումը և անդրադարձումը, չափելու ժամանակ նրանցից ոգտվելու հմտություն։ Ուղղանկյուն և քառակուսի։ Նրանց կողմերն ու անկյունները․

Քառակուսու ուղղանկյան կառուցումը անկյունագծի և քանոնի ոգնությամբ։

Յերկրի մակերևույթի չափերը՝ ար, հեկտար։

Փոքրիկ ուղղանկյուն հողաբաժնի գծագրումը վանդակավոր թղթի վրա ըստ մասշտաբի։ Քառակուսի չափեր։

Փոքրիկ ուղղանկյուն մակերևույթների անմիջականապես չափումը (երբև միավոր չափ ընդունված քառակուսին վրան դնել — չափելով)։ Ուղղանկյան մակերևույթի չափելով հաշվելը՝ ըստ յերկարության և լայնության։ Ուղղանկյուն հողաբաժնի իսկական չափը գտնելը ըստ պլանի և տվյալ մասշտաբի։ Ուղղանկյուն դիագրամներ գծագրելը։ Հրապարակների, ուղղանկյուն հողաբաժինների չափելը (տեղում), նրանց անցկացնելը պլանի վրա ըստ մասշտաբի։ Եկկերից ոգտվելու հմտություն։

Չորրորդ դասարան․ — Թվաբանության դասընթացքը ամբողջ թվերով պետք անցնել 5-ամյա դպրոցի 4-րդ դասարանի ծրագրի ծավալով։ Տասնորդական կոտորակների կուրսը՝ 3-րդ և 4-րդ դասարանների ծրագրի ծավալով։

Հասարակ կոտորակներ — չորրորդ խմբի ծրագրին ավելանում է՝ անկանոն կոտորակից ամբողջ հանելը և ամբողջի գտնելը ըստ նրա մասերի ( 2 գործողությամբ)։ Տոկոսները՝ տես 4-րդ դասարանի ծրագիրը։ Յերկրաչափական նյութ—տես 4-րդ դասարանի ծրագիրը՝ վրան ավելացնելով ամենապարզ գրաֆիկներ կազմելը և ընթերցելը։

## ՀԱՍԱՐԱԿԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ —

Առաջին տարի։

1 Առաջին քայլերը դպրոցում։ ( 8 ժամ)



2 Հոկտեմբերիկներ։ ( 10 ժամ )

3 Մեր գործարանը։ (20 ժամ գյուղական դպրոցի և 26 ժամ քաղաքի դպրոցի համար)։

4 Մեր կոլտնտեսությունը։ ( 26 ժամ գյուղական դպրոցի և 20 ժամ քաղաքի դպրոցի համար)։

5 Ֆաբրիկաներ ու կոլխոզների, քաղաքների ու գյուղերի կապը միմյանց հետ։ ( 6 ժամ)։

Յերկրորդ տարի․

1. Բանվորների ու գյուղացիների կյանքն առաջ(ցարի ժամանակ) ու հիմա, (խորհրդ. իշխանութ. որոք) (60 ժամ)

ա) Ո՞վ եր կառավարում առաջ մեր յերկիրը։

բ) Տեխնիկան առաջ և հիմա։

գ) Աշխատանքի պայմաններն առաջ և հիմա։

դ) Քաղաքի ու գյուղի, մեր յերկրի տարբեր մասերի կապը իրար հետ առաջ ու հիմա։

ե) Վոչ ռուսական ազգերի դրությունն առաջ ու հիմա

զ) Բանվորուհիների ու գեղջկուհիների վիճակը առաջ ու հիմա։

ը) Յերեխաների կյանքի պայմաններն առաջ ու հիմա։

թ) Լուսավորությունն առաջ ու հիմա։

ժ) Բնակչության հանգիստն առաջ ու հիմա։

2. Բանվորների ու գյուղացիների հաղթանակը (10 ժամ)

Յերրորդ տարի։

1. Ինչո՞ւ պետք է իմանալ մեր անցյալը (2 ժամ).

2. Աշխատավորության վիճակը ճորտատիրական իրավունքի ժամանակ։ ( 4 ժամ )

3. Գյուղացիների պայքարը կալվածատերերի դեմ։ ( 6 ժամ )

4. Ճորտատիրական իրավունքի վերացումը.( 4 ժամ ).

5. Արդյունաբերության զարգացումն ու բանվորների պայքարը ցարական իշխանության դեմ մինչև 1905 թիվը։ (10 ժամ)

6. 1905 թվի հեղափոխությունը ( 12 ժամ )։

БИБЛИ ИН СТ ВОСТОКО Академ СС

7. Հոկտեմբերյան հեղափոխությունը ( 12 ժամ ):

8. Կոմունիստական կուսակցության դերը հանուն խորհրդային իշխանության մղվող պայքարում ( 12 ժամ)

9. Կոմյերիտմիությունը ( 6 ժամ ):

10. Պիոներները ( 4 ժամ ):

11. Սոցիալիզմի համար պայքարելը՝ վողջ աշխարհի աշխատավորության գործն է ( 4 ժամ ):

*Չորրորդ տարի:*

1. Խորհուրդները ( 16 ժամ ):

ա). Խորհուրդների անելիքները.

բ). Ո՞վ է ընտրում խորհուրդները:

գ). Խորհուրդները աշխատավորության մասսաներն մասնակից են դարձնում պետության կառավարման գործին:

դ.) Ս. Խ. Հ. Մ. — բոլոր ազգության աշխատավորների միությունն է կապիտալիզմի դեմ կռվելու և սոցիալիզմ կառուցելու համար:

2. Մենք կառուցում ենք սոցիալիզմ ( 4 ժամ ):

3. Սոցիալիստական ինդուստրիացում ( 22 ժամ):

4. Գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցումը ( 26 ժամ ):

5: Առաջին հնգամյակի նվաճումները կուլտուրական ֆրոնտում ( 5 ժամ ):

6. Առաջին հնգամյակի արդյունքները ( 4 ժամ ):

7. Յերկրորդ հնգամյակի հիմնական խնդիրները ( 8ժ ):

8. Յերկու աշխարհներ՝ կապիտալիստական ու սոցիալիստական ( 10 ժամ ):

## ԲՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ.

*Առաջին դասարան.* — մշակվում է այբբենական դասարանի ծրագիրը հետևյալ կարգով. —

1. Ամրան յեղանակից աշնանն անցնելը. աշնանային փոփոխությունները բնության մեջ և մարդու աշխատանքային գործունեությունը:



2 Ձմրան ամիսներն Աբխազիայի պայմաններում: Սեզոնային փոփոխությունները: Մարդու աշխատանքային գործունեությունը:

3. Գարնանային փոփոխությունները բնության մեջ: Աշխատանքային գործնեությունը գարնանը:

*Յերկրորդ դասարան.* — Թեմատիկան — 1. Ամրան բնութագիրը և աշնանային պատկերներին անցնելը: Սեզոնային փոփոխությունները բույսերի կյանքում:

2. Բանջարանոց.

3. Այգի:

4. Ընտանի և վայրի կենդանիներն ու թռչունները:

5. Գարնանային փոփոխությունները բնության մեջ և աշխատանքային գործունեությունը գարնանը:

6. Անտառը գարնանը:

Զրույցներ տարվա ընթացքում գետերի և ծովերի մասին:

*Յերրորդ խումբ* — Մշակվում են հետևյալ թեմաները. —

1. Հողը և օգտակար հանածոները:

2. Բույսերի կյանքը ( 2-րդ և 3-րդ դասարանների ծրագրից):

3. Կենդանիների մասին:

4. Ջուր:

5. Օդ:

6. Ելեկտրական յերևույթները բնության մեջ:

*Չորրորդ դասարան:* — Մշակվում է 5-ամյա դպրոցի ծրագրային նյութը ամբողջությամբ:

## ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ.

*Յերրորդ դասարան.* — Մշակվում են հետևյալ թեմաները. — 1. Գյուղը և նրա շրջապատը:

1. Յերկրագունդը։

2. Աբխազիայի Ա. Ս. Խ. Հ. աշխարհագրությունը։

Չորրորդ դասարան. — Մշակվում են հետևյալ թեմաները։

1. Վրաստանի Ս. Խ. Հ. և Անդրկովկասի Ս. Ֆ. Խ. Հ.

2. Ս. Խ. Հ. Մ. Քաղաքական և ֆիզիքական տեսություն,

3 Աշխարհի քարտեզը։

Բովանդակության ծավալը նույնն է, ինչ վոր ցույց է տրված 5-ամյա ուսուցման դպրոցի ծրագրում։

## ՊՈԼԻՏԵԽՆԻՔԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ.

Առաջին դասարան։ —

Մշակման համար օգտագործվում է հնգամյա դպրոցի առաջին և յերկրորդ տարիների ծրագրային նյութը։ Ծրագրային նյութը ծավալվում է հետևյալ թեմաներով։

1. Աշխատանքը թղթից։
2. Կավը և նրա կիրառումը։
3. Առաջին աշխատանքները փայտից՝ անտառային նյութերը յենթաթեմայով։
4. Աշխատանքը մազաթելերից և կտավից։
5. Տեխնիքական մոդելացում և կոնստրուկտիվ աշխատանքներ։
6. Գյուղատնտեսական աշխատանք։
7. Աշխատանքի կազմակերպումը։

Յերկրորդ դասարան։ — Մնում է ուսուցման յերրորդ տարվա թեմատիկան և ծրագրային ծավալը։

Յերրորդ դասարան. — Օգտագործվում է ուսուցման չորրորդ տարվա ծրագրային նյութը։

Չորրորդ դասարան. — Մշակվում է ուսուց-

60011-66



ման հինգերորդ տարվա ծրագրային նյութը։

## ԿԵՐՊԱՐՎԵՍՏ.

Առաջին դասարան. — առաջին դասարանում մշակվում են հնգամյա դպրոցի ուսուցման առաջին և յերկրորդ տարվա ծրագրային նյութերը։

Յերկրորդ դասարան. — Ուսուցման 3-րդ տարվա նյութը

Յերրորդ դասարան. — Ուսուցման 4-րդ տարվա նյութը։

Չորրորդ դասարան— Ուսուցման 5-րդ տարվա նյութը։

## ՅԵՐԳԵՑՈՂՈՒԹՅՈՒՆ

Առաջին դասարան մշակվում են այբբենական և առաջին դասարաններում դասավորված ծրագրային նյութերը՝ տրված 5-ամյա ուսուցմամբ դպրոցների համար։

Յերկրորդ, յերրորդ, և չորրորդ դասարանում պետք անցնել նյութերը համաձայն ուսուցման տարիների։

## ՖԻԶԿՈՒԼՏՈՒՐԱ

Այբբենական դասարանի ծրագրի բաժինները փոխադրվում են առաջին դասարանի համապատասխան բաժինները։

Հետագայում ծրագրային նյութը ծավալվում է դասարանների հաջորդական կարգով յերկրորդ, յերրորդ և չորրորդ։

ՀՀ Ազգային գրադարան
NL0237061

БИБЛИОТЕКА ИНСТИТУТА ВОСТОКОВЕДЕНИЯ Академии Наук СССР
50563